Վերջին երկու շաբաթներուն ընթացքին Լիբանանի մէջ ծայր առաւ կենսոլորտի պահպանման համար ծաւալած արշաւը, որ կազմակերպուած էր տեղական եւ միջազգային կենսոլորտի պահպանման կազմակերպութիւններու կողմէ, որոնց կարգին հիմնական տեղ կը գրաւէ «Կրիմփիս»ը: Վերջինս կը հաւատայ, որ քաղաքացիները նախ պէտք է գիտնան, թէ հիմնականորէն որո՞նք են ապականուած պատճառող երեւոյթներն ու տուեալները եւ թէ իրենք անձամբ կարողութիւնը ունին լուծումներ գտնելու եւ ապականութեան առաջը առնելու, նախաձեռնեն այս աշխատանքին, որովհետեւ այս բոլորէն զխաւոր տուեալները իրենք են:

«Գիտնալու իրաւունքը առաջին քայլն է առանց ապականումի ապագայի մը» նշանաբանը կրող արշաւի ձեռնարկած «Կրիմփիս» հիմնականորէն կ'ուզէ լուսարձակի տակ առնել լիբանանեան ծովեզերեայ շրջաններուն մէջ տարածուած ապականումը ու աղտոտութիւնը, քաղաքացիներուն տեղեկութիւններ փոխանցել թէ՛ անոնց եւ թէ՛ անոնց պատճառած վնասներուն մասին, ինչպէս նաեւ՝ կառավարութենէն պահանջել, որ լիբանանցիներուն աւելի տայ ծանօթանալու երկրին մէջ տեղական ներկայութիւն եղող քիմիական նիւթերուն, անոնցմէ արտադրուած աղբերուն եւ բնութեան մէջ գանձող ոչնչացողներուն ձեւերուն: Կազմակերպութիւնը կը հաւատայ, թէ ապականումի մասին բաւարար տեղեկութիւններու փոխանցումը բնականաբար պիտի առաջնորդէ անկէ ձեռքազատելու աշխատանքներու եւ փորձերու:

Այս մէկը սկզբունքային եւ իտէլայական ձեւն է հարցերուն մօտեանալու եւ անոնց լուծման համար աշխատելու, սակայն իրողական գետնի վրայ արդեօք այս կոչերն ու պետութեան ուղղուած հրահրները որքանո՞վ ձեռնտու եւ գործնական են նոյնինքն պետութեան եւ անոր շահերուն համար:



Այս իրողութեան կը գիտակցի նաեւ կառավարութիւնը, սակայն ան նախ այդ շրջաններուն մէջ չընկալելով, երկրորդ՝ գլխու աւելորդ ցաւեր չցանկանալով, ինչպէս նաեւ՝ այլ շահերէ եւ համայնականութիւններէ մեկնած կը փորձէ խուսափել այդ հարցէն՝ քաղ գիտակցեցումով, թէ որոշ ժամանակաշրջանի մը համար բարձրացած բողոքի ձայները ուշ կամ կանուխ պիտի մարին, կեանքը պիտի շարունակէ իր «ընական» ընթացքը, եւ ժողովուրդը իր շնչած ապականած օդը «Աստուածային» պիտի նկատէ:

Այս երեւոյթին կենդանի պատկերն է վերջերս բացուած աղբերու թղթածրարն ու «Սոլիտեր»ի հետ կնքուած համաձայնութեան պարագան: Լիբանանի աղբերը որոշ շրջաններու մէջ կանոնաւոր կերպով կը հաւաքուին, այլ շրջաններու մէջ անհոգութեամբ, քանի մը օրը անգամ մը կը վերցուին, իսկ այլ՝ բոլորովին անբախտ նկատուող շրջաններու մէջ անոնք կը կուտակուին եւ «կը զարգարեն» փողոցներուն, եւ շատ յաճախ՝ բնակարաններուն մուտքերը: Աղբերը հաւաքուելու պարագային եւս քաղաքացին չի գիտեր, թէ անոնք ո՞ր կը տարուին եւ ինչ ձեւերով կը փճացուին: Այսօր աղբերու փճացման զանազան առողջապահական եւ օգտակար ձեւեր գոյութիւն ունին եւ կարելի է զանոնք օգտագործել այլ նպատակներու համար: Լիբանանի մէջ այդ գրողութեան մասին ոչ ոք կը խօսի եւ կասկածելի է, որ ան գործադրուի: Որոշ ժամանակաշրջանի մը համար փորձեր կատարուեցան աղբերու անջատ տակառներ գետեղելու եւ ապակին, թիթեղը, թուղթերն ու խաւքարտերը իրարմէ անջատելու, սակայն քաղաքացին եւս օժանդակութեամբ ձեռք չերկարեց եւ օրին չգործակցեցաւ պետութեան հետ: Այսպիսով, այդ տակառները պարապ մնացին, մինչ աղբերը կուտակուեցան անոնց կողքին:

Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ հարիւրէ աւելի քիմիական նիւթեր կ'օգտագործուին աղբերու վերամշակման կամ անոնցմէ ձեռքազատելու համար, այս կը նշանակէ, թէ աւելի քան 1500 քիմիական նիւթեր մուտք կը գործեն Լիբանան եւ կ'օգտագործուին անտրոշ նպատակներու համար եւ անոնց ձգած ազդեցութիւնը կը մնայ թաքուն:

Լիբանանի մէջ բողոք ներկայացնելու առիթը ստեղծուած է բոլոր քաղաքացիներուն համար, սակայն հետաքրքրական է, թէ այդ բողոքներն ու օգնութեան կանչները որքանո՞վ տեղ կը հասնին ու արդիւնք կու տան: Մեծ գործարաններու եւ ծուխ արտանետող ընկերութիւններուն դէմ դատ լանալու իրաւունք ունի քաղաքացին: Տեսականորէն իրաւունքներ տարլը դուրին է, սակայն դժուար գործադրելն ու իրական կեանքին մէջ զանոնք կիրարկելն է: Ոեւէ անձի կամ որեւէ հաստատութեան դէմ դատ լանալու պարագային, քաղաքացին անպայ-

ման պիտի իյնայ պարտքերու եւ հոս ու հոն բաշխուող մեծ գումարներ վճարելու պարտաւորութեան տակ, որպէսզի եթէ զիմացինը իրմէ աւելի գորաւոր չէ եւ համապատասխան նեցուկներ չունի, ան կարենայ շահիլ դատը եւ գոնէ որոշ ժամանակաշրջանի մը համար մաքուր օդը շնչել: Անցեալ ամսուան ընթացքին ազուրկ բարձրացաւ խումբ մը լիբանանցիներու կողմէ, որոնք կը բողոքէին մարդոց առողջութեան հսկողութեան եւ ապահովման համար հաստատուած հիւանդանոցի մը դէմ, որմէ արտանետուած ծուխին պատճառով իրենք շնչահեղձ կ'ըլլային եւ իրենց պատշգամները «սեւ սաւան»ով կը պատուէին: Ի յայտ եկաւ, որ հիւանդանոցային անգործածելի իրերու, դեղերու եւ այլ նիւթերու փճացման բաժնէն բարձրացած ծուխն էր, որ իսկական վտանգ կը հանդիսանար շրջանի բնակիչներուն: Նման բազմազան պարագաներ արձանագրուած են եւ կ'արձանագրուին, սակայն սակաւաթիւ պարագաներ լուծման հասած են:

Բողոքներ իրաւունքը տրուած է բոլորին, սակայն բողոք ընդունելն ու անոր ընդառաջելը՝ քիչերու...
«ՀՍԿԱՅ ԿԱՊՈՅՏԸ» ՆԻՒԹՈՎ ԾՈՎՈՒ ՄԱՔՐՈՒԹԵԱՆ ԱՐՇԱՒ
Օրին կողքին, լիբանանեան ջուրը եւս ապականած է ու լի՝ թունաւոր նիւթերով:

Անցեալ շաբաթավերջին լիբանանեան բանակը, քաղաքացիներ, սկստուներն ու այլ կազմակերպութիւններ կազմակերպեցին Լիբանանի երբեմնի գեղեցիկ ու հուշակաւոր Ծովեզերքի մաքրութեան: Անոնց զխաւոր նպատակն էր ծովը ջնջել կապոյտի վերածել եւ հաւաքել անոր վրայ ծփացող աղբերն ու աղտոտութիւնները: Այս նախաձեռնութիւնը փաստօրէն լայն արձագանգ գտաւ եւ մեծ թիւով երիտասարդներ ու համալսարանականներ միացան շարժումին՝ ծովը կապոյտ տեսնելու յոյսերով:

Մաքրութեան ձեռնարկող անհատներուն ընդհանուր թիւը հասաւ 700-ի եւ անոնք վկայեցին, թէ այս տարի իրապիճակը աւելի լաւ ու զրական է, քան՝ անցեալ տարիներուն, երբ օրեր ու շաբաթներ անհրաժեշտ էր մաքրութիւնը ամբողջացնելու: Պատահանտուները դիտել կու տան, թէ միայն կառավարութիւնը չէ այդ կացութեան պատասխանատուն, որովհետեւ քաղաքացիները եւս պէտք է օժանդակեն աղբերը որեւէ տեղ չթափելով, իրենց ծովափին եւ անտաններուն հոգ տանելով եւ այլն:

Խորքին մէջ, թերեւս պէտք է փոխուի նաեւ լիբանանցիին մտայնութիւնը, որովհետեւ անոր համար որեւէ վայր, ուր ինք ուզէ աղբ թափել, իրեն համար աղբաման կը նկատէ:

Այս արշաւին ընթացքին մաքրուեցան շուրջ 56 ծովեզերեայ շրջաններ: Սակայն տարին անգամ մը կամ երկու անգամ կազմակերպուող այս արշաւները բաւարար չեն ծովեզերքի եւ ընդհանրապէս ջուրի մաքրութիւնը երաշխաւորելու համար, որովհետեւ այս առնչութեամբ պէտք է հետեւողական աշխատանք ծաւալել եւ հսկել մասնաւոր քաղաքացիներուն հայթայթուած ըմպելի ջուրին: Բացառուած չեն այն թունաւորումներն ու անհանգստութիւնները, զորս քաղաքացիները կ'ունենան ջուրի մէջ գտնուող մանրէներուն պատճառով: Այս մէկը առաւել բացայայտ է քիչ քան լիբանանցիներու մէջ, ուր ոչ միայն ջուրը ապականած է, այլ գայն փոխադրող խողովակները ամբողջութեամբ փճացած են, եւ մինչեւ տուները հասնիլ՝ ջուրին մէջ զանազան աղբեր ու մանրէներ կը խառնուին: Թերեւս ջուրի ապականումը եւս ունի իր դրական կողմը, մասնաւոր՝ վաճառականներուն համար, որոնք իսկոյն իրենց «գտուած ու մաքուր» ջուրերու ծանուցումներով շուկայ կ'իջնեն եւ կը փորձեն գրաւել քաղաքացիները:

Սկզբնական շրջանին ծախուած ջուրերուն գիները բաւական բարձր էին եւ անոնք մատչելի չէին բոլորին. ապականումի ընդարձակման եւ քաղաքացիներուն մօտ կասկածներուն շեշտուելէն ետք, ընտրութիւնները աւելի լայնցան եւ գիները նուազեցան: Պէտք է յիշել նաեւ այն առաւելութիւններն ու առիթները, որոնք կ'ընծայուին



Կարգ մը ընկերութիւններու կողմէ՝ անոնք ջուրի կողքին փոքր սառնարաններ կը նուիրեն, քանի մը տակառ ջուրին հետ մէկը նուէր կու տան եւ այլն:

Ապականած ջուրէն ձեռքազատելու համար լիբանանցիք իրենց առօրեայ ծախսերուն կողքին մեծ գումարներ կը տրամադրեն այս ջուրերուն, սակայն անոնք արդեօք որքանո՞վ մաքուր են եւ անոնց վրայ արդեօք հսկողութիւն գոյութիւն ունի՞:

Սեղողուելու վրայ եղող քաղաքացին կը կառչի նոյնիսկ բարակ շիւղէն եւ կը նախընտրէ այդ ջուրը՝ իրեն չարեաց փոքրագոյնը: Ջուրի ապականումին փրկուելու համար լատուկ ընկերութիւններ կան եւ անոնք ջուր կը ծախեն. արդեօք պիտի գայ օրը, որ օղի ապականութեան փրկող եւ օղի վաճառող ընկերութիւնները հաստատուին:

Պատրաստեց՝ ՆՈՐԱ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ՄՍՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնայու Գաղտնիքները

ԿԵՆՍԱՆԻԹԵՐԸ ԴԵՂԱՏԱՏԻՆ, ԹԷ ԱՄԱՆԻՆ ՄԷՋ

Դարուս մէջ պատահող փոփոխութիւններուն հետ նաեւ յառաջ եկան ֆաշիստ կողմէն ուսուցիչները, որոնք իրենց կարգին պատճառ դարձան սննդականոնի նուազ կազմակերպման: Անկազմակերպ սննդականոնի պատճառով մարդիկ սկսան կենսասնիւթեր պարունակող դեղահատեր սպառել՝ գոցելու համար կենսասնիւթերուն բացը, զորս պէտք էր ստանալին ուսուցիչներու միջոցով: Անոնք, որոնք այս դեղահատերէն կը սպառեն, պէտք է նկատի առնեն, թէ անոնց անկազմակերպ սպառումը կրնայ տանիլ թունաւորման: Հետեւաբար նախընտրելի է, որ դեղահատերը սպառին ճաշի ընթացքին: Երկրորդ պարունակող դեղահատը պէտք է առնել Սէ. կենսասնիւթին հետ միասին: Պէտք է խուսափել երկաթի եւ քալսիումի միասին առնելէ: Կենսասնիւթերու զխաւոր աղբիւրը ուսուցիչն է: Հետեւաբար արագ անհարկով մը կը ներկայացնենք կենսասնիւթերով հարուստ ուսուցիչները:

Գլխաւոր եօթը ուսուցիչները, որոնք ամբողջ աշխարհի տարածքին ծանօթ են իրեն սննդաբար ուսուցիչներ, հետեւեալներն են.

1.- ՍՍՏՈՐԸ
Դարերու ընդմէջէն ծանօթ է իրեն բոլոր հիւանդութեանց բուժիչ դեղը: Դեղահատերու միջոցով կ'օգտագործուի՝ վատ տեսակի քոլեսթերոլին քանակը նուազեցնելու եւ մարմնին մէջ արեան հոսքը աւելցնելու համար: Երկար ժամանակի վրայ սխտորին սպառումը մարմինը կը պաշտպանէ քաղցկեղի տեսակներէն, մասնաւորաբար՝ աղիքային քաղցկեղէն: Սխտորը կը պարունակէ նաեւ մանրէներուն դէմ դնող տարրեր, հետեւաբար պէտք է ճաշին մէջ օգտագործել զայն, մասնաւորաբար՝ հարբուխ ըլլալու պարագային: Սխտորի մէկ պճեղը կը պարունակէ չորս ջերմութ, ինչպէս նաեւ՝ Պէ. կենսասնիւթը:

2.- ԱՌՈՒՍՏՈՆ
Բոլոր անոնք, որոնք նիհարնալու նպատակով յատուկ սննդականոնի կը հետեւին, կը խուսափին աւտօքստոյն, որովհետեւ հարուստ է ճարպով: Աւտօքստոն սննդաբար ուսուցիչ մըն է եւ ձէթին նման կը պարունակէ unsaturated ճարպի տեսակ, որ մարմնին քոլեսթերոլին քանակը կը նուազեցնէ: Աւտօքստոն հարուստ է Ծօ. եւ Պէ. Ծօ. կենսասնիւթերով, ինչպէս նաեւ՝ մակնեղիւնով եւ երկաթով: Ան շատ աւելի մեծ քանակութեամբ փոթափում կը պարունակէ, քան պանիրը: Ան նաեւ կը պարունակէ ֆոլիքթթու, եւ այն կենսասնիւթերը, որոնք իզական սեռին համար անհրաժեշտ են, մասնաւորաբար անոնց, որոնք յղուցիւնը արգիւղը դեղը կ'առնեն: Կէս աւտօքստ կը պարունակէ 160 ջերմութ:

3.- ԼՈՒԻԿԸ
Լուիկը կը պարունակէ Ծօ. կենսասնիւթ: Անկէ մեծապէս օգտուելու համար պէտք է թարմ սպառել զայն եւ հեռու մնալ տուփեղէններէն:

4.- ԱՉՍՏՔԵՂԸ
Այս բանջարեղէնը ընդհանրապէս կ'օգտագործուի պնակները զարգարելու համար, սակայն անոր օգուտը շատ աւելի է, քան՝ միւս բանջարեղէններունը: Ան հարուստ է կենսասնիւթերով եւ հանքայիններով: Ան կը պարունակէ ֆոլիքթթու, Ա. կենսասնիւթ, քալսիում, փոթափում եւ երկաթ: Ան միզեցնող բանջարեղէն մըն է եւ կը պարունակէ հակաքոլեսթերոլ տարր: Ազատեղը կը նուազեցնէ սրտի եւ երակներու հիւանդութեան տոկոսը եւ կը գործնէ մարմնին դիմադրողականութիւնը: Ազատեղը երկաթի աղբիւրը կը նկատուի, որովհետեւ անոր մէջ գտնուող Սէ. կենսասնիւթը պատճառ դառնայ, որ ան մեծ քանակութեամբ երկաթ ծծէ:

5.- ՄԱՃՈՒՆԸ
Մաճունը մարմնին դիմադրողականութիւնը կ'աւելցնէ բազմապատկելով հիւսկէններուն ուժը՝ ժահրերու դէմ պայքարելու համար: Ան բորբոքումէ կը պաշտպանէ միզային եւ մարտդական գործարանները: Ան նաեւ մարմինը կը պաշտպանէ փորհարութենէ: Թէեւ փորթէինի աղբիւր չէ, սակայն հարուստ է քալսիումով եւ Պէ. ընտանիքին պատկանող կենսասնիւթերով: Բժշկականօրէն նախընտրելի է մաճունը պղպ սպառել:

6.- ՍՈՄՈՆ ԶՈՒԿԸ
Մեծ քանակութեամբ ճարպ պարունակող ձուկերէն կը նկատուի: Սակայն «Օմեկա - 3» ճարպի տեսակը, որ ձուկին մէջ կը գտնուի, օգտակար է առողջութեան համար: Ան կը պաշտպանէ յօգբեր, զիջային դրութիւնը եւ ուղեղը, ինչպէս նաեւ կը նուազեցնէ քոլեսթերոլին քանակը: Հարիւր կրամ սոմոն ձուկը կը պարունակէ 130 ջերմութ: Զէթին քանակը նուազեցնելու համար՝ փոռին մէջ պատրաստել զայն: Նուազագոյնը շաբաթը երկու անգամ պէտք է ձուկ սպառել:

7.- ՊՐՈՔՈՒՆ
Կէս գաւաթ թարմ պրոքոլին կը պարունակէ միայն 40 ջերմութ եւ 4 կրամ բնաթել (ֆիպր): Ան օգտակար է շաքարախու ուղեցողներուն համար: Ան նաեւ օգտակար է նիհարնալու ուղեցողներուն համար: Մէկ ժուժի քանակութեամբ պրոքոլին արդէն օրուան ընթացքին բաւարար Սէ. կենսասնիւթ կը պարունակէ իր մէջ: Ան նաեւ կը պարունակէ մեծ քանակութեամբ քալսիում, ինչպէս նաեւ՝ հակաքոլեսթերոլ տարր:

ԲԱՐԱ ԵԱՐՏԵԱՆ

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒ ՌԻՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազդակ»-ի «Անահիտ» ամսաթերթը Նոյեմբերին սկսեալ յաջորդական թիւերով հարցազրոյցներ պիտի ունենայ մասնագէտ բժիշկներու հետ: Առիթ պիտի տրուի նաեւ մեր ընթերցողներուն՝ ուղղելու իրենց հարցումները: Ձեր հարցումները կրնաք ուղղել անձամբ կապուելով «Ազդակ» կամ զանոնք ղրկելով ֆաքսի կամ Ե-նամակի ծամբով: «Ազդակ»-ի հեռաձայնի թիւերն են 258526 - 260115, ֆաքս՝ 258529, իսկ Ե-նամակի հասցեն՝ anahidmonthly@hotmail.com: Նոյեմբեր ամսուան հարցազրոյցը պիտի ըլլայ ընդհանուր մարմնի մասնագէտ տոքթ. Յակոբ Մելքեանի հետ: Կը սպասենք ձեր հարցումներուն:



bezdig_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Պէլրուի սակարանից մէջ օտար դրամահիշներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.	
Սուրիական թղթակի	28,60 - 28,80 լ.ն.
Քուէթեան տինար	5122,00 - 5147,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3986,00 - 4011,00 լ.ն.
Ա.Մ.Էմիրութեանց տիրիամ	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէուտական ռիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ	220,00 - 230,00 լ.ն.
Անգլիական սթերլին	2516,00 - 2526,00 լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1138,00 - 1143,00 լ.ն.
Թրքական լիրա	106,50 - 107,00 լ.ն.
Կիպրական փաունտ	3000,00 - 3025,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	13,65 - 13,75 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1132,00 - 1137,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	1036,00 - 1041,00 լ.ն.
Եւրօ	1759,00 - 1769,00 լ.ն.

● ՈՍԿԻ	
Անգլիական մէկ ոսկի	144,500 - 149,500 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	130,000 - 135,000 լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	120,000 - 125,000 լ.ն.
Մեքսիքական փէսոս	690,000 - 710,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	18,000,000 - 18,200,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	373,50 - 374,00 \$
Մէկ օնս արծաթ	4,89 - 4,91 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.	
Եւրօ	1.1664 - 1.1668
Քանադական տոլար	1.3290 - 1.3295
Չուիցերիական ֆրանք	1.3243 - 1.3248
Ճափոնական եէն	109.52 - 109.57
Մէկ սրբրից	1.6694 - 1.6698

Մէկ փոլար 585 դրամ

● ՍՈՒԼԵՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ	
Գիճի Ա. ճշդում Գիճի Բ. ճշդում	
Ա. կարգ	4,10 4,22
Բ. կարգ	- -

ԼՈՒՄԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852


ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ԶԲՕՍԱՇՐՁՈՒԹԻՒՆ

ԶՈՒՅԵՐԻԱԿԱՆ ԺԱՊԱԻՆՆԵՐ՝ «ԼԵՊՈՆԸՆ ՄԻԹՅ ՍՈՒՅԸՐԼԷՆՏ» ՓԱՌԱՏՕՆԻՆ

Լիբանանի մէջ Զուիցերիոյ դեսպանատունը կազմակերպած է «Լեպր-լէնտ» խորագրեալ փառատուն մը, որ տեղի կ'ունենայ մինչեւ Կիրակի, 19 Հոկտեմբեր, «Մովըն-փիթ» պանդոկին մէջ: Երկու երկիրներուն միջեւ մշակութային թէ ընկերային մարզէփառատուն մը, որ ծակցութիւնը քաջալէրող այս նախաձեռնութիւնը այսօր եւ վաղը իր աշխատանքներուն ծիրին մէջ լիբանանցի հանրութեան կը ներկայացնէ բացօթեայ շարժապատկերի պահեր:

ԱՅՍՈՐ



Այսօր երեկոյեան ժամը 8:00ին ցուցադրուելիք գլխաւոր ժապաւէնը՝ «Իր-նըսթոլ ին Հաւանա» անցեալ տարուան պուրցերիական կարեւորագոյն ժապաւէններէն մէկն է: Ան կը ներկայացընէ Քուսայի հողին վրայ Չուիցերիա - Միացեալ Նահանգներ երեւակայական տագնապի մը պատմութիւնը: Այս ժապաւէնին կը նախորդէ պուրցերիական աւելի կարճ ժապաւէնի մը՝ «Պա սրափ 99»ին ցուցադրութիւնը, որ տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամը 7:30ին, «Մովըն-փիթ»ի մէջ:

Վաղը՝ Ուրբաթ, 17 Հոկտեմբերի երեկոյեան ժամը 7:30ին, դարձեալ «Մովընփիթ»ի մէջ պիտի ցուցադրուի լիբանանեան կարճ «Հաւա Պէլրու» ժապաւէնը, որուն պիտի յաջորդէ պուրցերիական-լիբանանեան միացեալ դրութեան արդիւնք եղող «Թաքսի սրվիս» կարճ ժապաւէնի ցուցադրութիւնը:

- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Ժանին Ռուպէլ» ցուցասրահ, մինչեւ 17 Հոկտեմբեր:
- Թատրոն՝ «Պ'Ինքիզար Կոստ», ժամը 20:30ին, «Պէլրու» բառերասրահ, մինչեւ 24 Հոկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Ֆէյզըզ», Ֆլաւիա Քոստիի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 18 Հոկտեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Փալեսթին աւան 1948», Ֆրանսական մշակութային կեդրոն, մինչեւ 31 Հոկտեմբեր:



ԱԶԳԱԿ 50 ՏԵՄԵՐ ԱՊՐԵՆՁ 16 Հոկտեմբեր 1953

ՕՂԵՐԵՒՈՅՑ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003

ՊԵՅՐՈՒԹ ԱՄՊՈՏ

ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆ ԾԵՐԵԿ՝ 27°C

ԳԻՇԵՐ՝ 19°C

ԽՈՆԱՌԻԹԻՒՆ՝ 67%

«ԱԶԳԱԿ»-Ի ՄԵՁ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազդակ»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, ՄԻՆՉԵՒ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00: ՄԱՀԱՋԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

www.hamazkayin.com

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԱՐՐԱՀԱՍ ԶԵՕՅԼԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Նոր Մարաշի Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՀՄԱՅԵԱԿ ՉՊԼԱԶԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Հոկտեմբեր 2003, Նոր Մարաշի Սրբոց Զառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5567 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | | |
|--|--|
| 1. Թեւաւորներու միջեւ կռիւ: | 1. Ազնուական ձիաւոր - Կոզի: |
| 2. Կրօնաւորի տարագ-վայրի կարոս: | 2. Կրկնուած բաղաձայններ - Փորձանք - Իզակիան «նա»: |
| 3. Անտեղեակ, անգոյս: | 3. Մարմնի ներքին գործարաններէն - Շարունակ: |
| 4. Սիրական - Կազմոր, վայրի նարդոս: | 4. Անորոշ դերանուն - Պատերազմիկ կին: |
| 5. Հայ թագաւոր - Համադասական շողկապ: | 5. Քրիստոսի խաչափայտին երկրորդ դամբ - Ստացական անական: |
| 6. Իրաչէլեան գաղտնի գործակալութիւն - Իսամ-կորէն՝ այո՛: | 6. Մկնահարսնուկ - Յոյն փրկիտփայ: |
| 7. Յետալի - Պաղանձալ: | 7. Յանձանձիչ, հայ-թայթող: |
| 8. Չաչ - Անիրաւուն-թիւն կամ նեղութիւն: | 8. Լիբանանահայ մամուլէն - Տեղափոխուած տառեր: |
| 9. Ո՛ր - Կրկնուած բաղաձայններ - Լիբանանի գետերէն: | 9. Մաղիամի թագաւորներէն - Կից: |
| 10. Մեր առաջին թարգմանիչներէն - Շուլայ: | 10. Ժողով (հակ.) - Չայ-նակից գիրք - Կաթսայ: |
| 11. Յոյր - Երեւակայական, անիրական: | 11. Նիւթ: |

ԹԻՒ 5566

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	
1	Կ	Ո	Ր	Ն	Գ	Ա	Ն	Ն	Ա	Ն	Կ
2	Ո	Ր	Ե	Ա	Ր	Ի	Ս	Պ	Ա	Ռ	
3	Պ	Ա	Ն	Ի	Ն	Տ	Ի	Ա	Ն	Ա	
4	Պ	Ա	Ն	Չ	Ա	Պ	Ե	Ն			
5	Մ	Ա	Կ	Ի	Ա	Լ	Ի	Ք			
6	Ս	Կ	Ա	Չ	Ա	Կ	Լ	Ա	Մ	Ա	
7	Կ	Ա	Ն	Ս	Ո	Ց	Ն	Ս			
8	Ո	Ն	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	Ո	
9	Տ	Ի	Ո	Ս	Մ	Ա	Ն	Ի	Ա		
10	Չ	Ո	Ր	Ի	Ն	Ա	Չ	Ն	Ա		
11	Շ	Ա	Ն	Ի	Տ	Ե	Գ	Ի	Լ		

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

- ԽՈՅ** (21 Մարտէն 20 Ապրիլ)
Ունիք այն տպաւորութիւնը, թէ մարդիկ կը լռեն, երբ ձեզ տեսնեն, ու կը փախչին ձեզմէ: Ասիկա կը նշանակէ կասկածամտութիւն: Անկեղծ եղբ դուք ձեզի եւ ուրիշներու հետ:
- ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)
Ձեր խրատները շատ օգտակար պիտի ըլլան ձեր եղբոր կամ ձեր զարմիկին, որ կը գտնուի շփոթ եւ ծանր վիճակի մը մէջ: Ան պիտի լսէ ձեզ եւ պիտի փոխէ իր յոռի միտքերը:
- ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)
Մի՛ վարանիք պահանջել բարեկամի մը ձեր փոխտունը դրամը: Ան կրնայ մոռցած ըլլալ: Պարգապէս յիշեցուցէք: Օրը լաւ լուծումներ պիտի բերէ ձեր մտահոգիչ հարցերուն:
- ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)
Կը պատրաստէք անակկալ մը ձեր սիրած անձին: Բայց հարցը այն է, որ չէք կրնար գաղտնիք պահել: Օրը կը բեյադրէ ըլլալ խոհեմ եւ պարկեշտ:
- ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
Այսօր պիտի գոյս կեանքին ուրախութիւնը, պիտի ունենաք բարձր տրամադրութիւն: Այս իրողութիւնը պիտի ուրախացնէ նաեւ ձեր հարազատները, որոնք մտահոգ են ձեզմով, ձեր տրամադրութեան բարելաւումով:
- ԿՈՅ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
Պիտի տաք դժուար որոշում մը, որ սակայն պատարիք պիտի ըլլայ ձեզի համար, որովհետեւ պիտի յարգէք դուք ձեզ՝ հաւատարիմ մնալով ձեր գաղափարներուն:
- ԿՇԻՌՔ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
Ձեզի խոստում տրուած է ամսականի յաւելումի առնչութեամբ, բայց ամիսներէ ի վեր այս խոստումը կը մնայ խօսքի սահմանին մէջ: Համբերեցէք քիչ մը եւս:
- ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
Այն, ինչ որ կապուած է արտասահմանի հետ, անձնական կամ սպարտեզի հարցերու բերումով նպաստաւոր էլը մը պիտի ունենայ: Յաջող գործեր պիտի ունենաք:
- ԱՆԵՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
Եթէ կ'ուզէք, որ ձեր գործերը լաւ ընթանան, հարկ է որդեգրէք յստակ կեցուածք մը: Անտարբեր մի՛ մնաք ոչ մէկ հարցի նկատմամբ: «Ուրիշին ձեռքով միայն օձ կը բռնեն», կ'ըսէ առածը:
- ԱՅՏԵՂՋԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
Մանր-մուր հարցեր ունիք ընտանեկան կամ ամուսնական կեանքին մէջ: Ամէն մարդ կ'ունենայ նման հարցեր: Մի՛ մտահոգուիք: Օրը նպաստաւոր է:
- ԾՈՒԿԱՆՅԵ** (21 Յունուարէն 19 Փետրուար)
Աշխատանքի մէջ պիտի մնաք նոյն դիրքին վրայ, ոչ մէկ փոփոխութիւն: Ձեր աշխատավարձը պիտի մնայ նոյնը: Հետեւաբար պատրաստեք մի՛ ունենաք:
- ՉՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)
Դացքեր ներկայ ըլլալու բաւարարական ներկայացում մի՛ մը: Հոգ տարէք ձեր արտաքին տեսքին, հագուածքին: Օրը պիտի անցնի գուարքի բարեկամներու հետ:

ՅԻՐ ՈՒ ՅԱՆ ՀԱՅԵՐ

Ինչպէս գրած էինք, Մամբրեկ արք. եւ ազգային վարչութեան երկու ներկայացուցիչները պտոյտ մը կատարած էին Մակեդոնիա եւ Թրակիա՝ միջառնակ ժողովուրդը: Այս առիթով հրատարակուած գեկոյցէն կ'իմանանք, թէ Քոմունիստի մէջ (Կիւմիւրիսիւն) կան 216 հայեր, Նեա Օրեսթիտայի մէջ կայ 14 ընտանիք, որոնք հակառակ եկեղեցիէ եւ դպրոցէ զրկուած ըլլալուն, ամուր կառչած են հաւատքին եւ մայրենի լեզուին: Աղեքսանդրու-



պոլսոյ մէջ հայերը երբեմն կը փայլէին ազգային կենսունակութեամբ: Այժմ քաղաքին մէջ կան 50 տնուոր հայեր: Հակառակ դպրոցէ զրկուած ըլլալուն, բոլորը հայերէն կը խօսին: Այցելած են նաեւ Քաւալա, Քասնթի, Տրամա, Սերեզ, ուր Ասլանեան անուն տրամաբուծ մը պատմած է, թէ շրջակայ գիւղերուն մէջ կը գտնուին բաւական թիւով հայեր: Սակայն տեղացի յոյներուն հետ ամուսնացած են ուժացած են:

ԱՅՍՈՐ՝ 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ

- 1971.- Մահ արեւմտահայ աշխարհաբարի ջերմ պաշտպան, «Հայկական»ներու հեղինակ եւ «Յուսաբեր»-ի խմբագիր Բենիամին Թաշեանի:
- 1991.- Հայաստան կ'ունենայ իր առաջին նախագահը:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

ԱՇԽԱՐՀ



ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ԳԱՀՈՒԿԱՐՇԱԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻՆ



Հ. Մ. Ը. Մ. Ի Լիբանանի Շրջանային վարչութեան կազմը այցելեց Լիբանանի դաշուկարչաւի ֆետերասիոնին եւ ընդունուեցաւ ֆետերասիոնի նախագահ Քամիլ Ռեզքի եւ ֆետերասիոնի անդամ եղբ. Նշան Համաճեանի կողմէ:

Արժարձուեցան դաշուկարչաւի կապուած հարցեր: Ֆետերասիոնի նախագահը ցաւ յայտնեց, որ Հ. Մ. Ը. Մ. ներկայիս դաշուկարչաւի խումբը չունի, տրուած ըլլալով որ լիբանանեան մարզական կեանքին մէջ այս մեծ կազմակերպութիւնը իր ուշագրաւ տեղը ունի: Ռեզք կող ուղղեց վերակազմելու Հ. Մ. Ը. Մ. Ի երբեմնի դաշուկարչաւի խումբը, խոստանալով ամէն ձեւով օժանդակել այդ աշխատանքին համար:

Նշեմք, որ նախագահ Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս ունէր դաշուկարչաւի խումբ մը, որ բաւական ճամբայ կտրած էր այս մարզին մէջ լիբանանեան առումով:

ԷԼՊԵՐ ԿԸ ՆՍԵՄԱՑՆԷ ԻՐ ՆԱԽԿԻՆ ԽՈՒՄԲԸ



Լիոնի յառաջապահ ձիովանի Էլպեր, երէկ գերմանական օրաթերթի մը հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին ըսաւ, որ իր նախկին ակումբը՝ Պայէրն Միւնխի երբեք յոյս չունի «Չէմփիընս Լիկ»-ի տիտղոսի տիրանալու: Պրակիցին աւելցուց ռսելով, որ Պայէրն ինքզինք բախտաւոր պէտք է զգայ, եթէ քառորդ աւարտականին տուն մը ապահովէ:

31 տարեկան Էլպեր, յառաջիկայ Հոկտեմբեր 21ին իր դէմ պիտի ունենայ իր նախկին ակումբը՝ Պայէրն Միւնխը: Ան յայտն է, որ «Չէմփիընս Լիկ»-ի վտուսի Ա. հանգրուանին այս մրցումը, վերջ պիտի գտնէ իր կազմին յաղթանակով:


ՊԵՐԸՆՊԱՌԻԸՐ ԿԸ ԶԱՂԿԷ «ԿՈՆՏԸՆ ԿՈՆ»Ի ԴՐՈՒԹԻՒՆԸ

Պայէրն Միւնխի նախագահ Ֆրանց Պեքըն-պուլը, գերմանական ռատիոկայանի մը հետ իր ունեցած հարցազրոյցին ընթացքին ըսաւ, որ ծիծաղելի կը գտնէ «Կոլտըն կոլ»-ի դրու-թիւնը, նկատի ունենալով որ երկարաձգման ընթացքին շատ յաճախ կը պատահի, որ տեղի ունենան հետաքրքրական պահեր, մինչ այդ դրութեամբ մրցումը անմիջապէս կ'ընդհատուի:

2006ի Մոնտիալին կազմակերպիչ երկրին՝ Գերմանիոյ յանձնարումներն նախագահը՝ Պեքընպուլը, կ'ակնարկէր 1970ի Մոնտիալին, երբ Գերմանիա - Իտալիա կիսաւարտական մրցումին, հինգ կոլ նշանակուեցաւ երկարաձգման ընթացքին:

Սակայն պէտք է նշել, որ Գերմանիա ընդհանրապէս ինք կ'ըլլայ «Կոլտըն կոլ»-ի դրութե-նէն օգտուողը: Վերջինը տեղի ունեցած անցեալ շաբաթավերջին, երբ աղջկանց Մոնտիալին աւարտականին, Շուէտի դէմ տեղի ունեցած մրցումին, գերմանացիք յաղթական դուրս եկան «Կոլտըն կոլ»-ով:

Իսկ եւրո-96ի ֆուտբոլի մրցաշարքի աւարտականին, Գերմանիա 2-1 արդիւնքով պարտուեցան մատնեց Չեխիան, շնորհիւ՝ Օլիվըր Պրիւզմի նշանակած «Կոլտըն կոլ»-ին:



Պեքընպուլը

ԱՆԳԼԻԱ - ԴԱՆԻԱ ՖՈՒԹՊՈՒԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

Պատրաստուելու համար Փորթուգալի մէջ տեղի ունենալիք Եւրո-2004ի ֆուտբոլի մրցաշարքին, Անգլիոյ ֆուտբոլի ասոցիացիոն խումբը յառաջիկայ ամիս «Օլտ Թրէ-ֆորտ»-ի մէջ բարեկամական մրցում մը պիտի կատարէ Դանիայի դէմ:

Վերջին անգամ անոնք երկուքը իրարու դէմ յանդիման եկան 2002ի Մոնտիալին (Բ. հանգրուան), երբ Անգլիա 3-0 արդիւնքով պարտուեցան մատնեց Դանիա: Անոնք երկուքը իրարու դէմ յանդիման եկած են 15 անգամ, որոնց ընթացքին Դանիա արձանագրած է միայն մէկ յաղթանակ, այդ ալ 1983ին, 1-0 արդիւնքով («Ուեմպլի»-ի մէջ):

Դանիա յառաջիկայ տարի ֆուտբոլի ալիք ա Ր Ե Կ Ա Մ Ա Կ Ա Ն մրցումներ ալ ունի կատարելիք Թուրքիոյ եւ Սպանիոյ դէմ:

Անդրադառնալով մրցակից կազմին Անգլիոյ մարզիչ Սվէն Կորան Էրիքսըն կ'ըսէ, թէ Դանիա կը մնայ ի խումբ մը, որովհետեւ ունի բացառիկ մարզիկներ:

Նշեմք, թէ անոնք երկուքը ալ ապահոված են Փորթուգալի իրենց տունները:

ԱՆԳԼԻԱՅ ՖՈՒԹՊՈՒԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԶԵԼՍԻ ԳՐԱԻԵՑ ՊԱՐԱԳԼՈՒԻՒԻ ԴԻՐՔԸ

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան Յրդ հանգրուանէն յետաձգուած մրցումի մը, Չեխի 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Պրիւմիկէնի դաշտին վրայ, գրաւեց ընդհանուր դասաւորման պարագը-լուսի դիրքը, իր ունեցած կոլէկտիւսին շնորհիւ գերազանցելով Արսենալը:

Չեխի եւ Արսենալ, որոնք կը հանդիսանան այն միակ երկու կազմե-րը, որոնք ցարդ պարտութիւն չեն կրած, Շաբաթ, 18 Հոկտեմբերին պիտի ճակատին իրարու դէմ, երբ Յրդ հանգրուանի մրցումներուն, մարզիչ Քլաուտիօ Ռանիերիի կազմը պիտի այցելէ «Հայ-պըրի» Մարզիչ Արսէն Վենկէրի կազմը իր կարգին պիտի փորձէ գոհ ձգել իր համակիները եւ արձանագրել եղանակ իր եօթներորդ յաղթանակը:

Ստորեւ՝ դասաւորումը:

	ԿԻՏ
1.- Չեխի	20 (18-7)
2.- Արսենալ	20 (16-6)
3.- Մանչ. Յունայթըտ	19 (16-3)
4.- Պրիւմիկէն	15 (8-5)
5.- Ֆուլհեմ	14 (15-9)

ԵՈՂԱՆ ՄԻՔՈՒ ՅՈՅՍ ՉՈՒՆԻ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲ

Վերտըր Պրեմընի փլէյմէյթըր Եոհան Միքու, երէկ յայտնեց, թէ վերջնականապէս իր յոյսերը կտրած է, որ օր մը դարձեալ կը հրաւիրուի Ֆրանսայի ֆուտբոլի ասոցիացիոն խումբ, նկատի ունենալով, որ այդ ուղղութեամբ երկար ժամանակէ ի վեր Ֆրանսայի ֆուտբոլի ֆետերասիոնը ոչինչ կը յայտարարէ:

30 տարեկան Միքու, որ իր ակումբին հետ ութ մրցումի ընթացքին չորս կոլ նշանակեց Պոնտրաիկայի մրցումներուն, այժմ անոր ակումբը կը գրաւէ ընդհանուր դասաւորման պարագլուսի դիրքը:

Պորտոյի նախկին մարզիչ Միքու, որ Եւրո-2000ի ֆուտբոլի մրցաշարքին 16րդ անգամ ըլլալով կրէր Ֆրանսայի շապիկը, դժուար թէ կարենայ



Միքու

պիտի ըլլայ մօտալուտ:

Սակայն Միքու կ'եզրափակէ ըսելով, որ անոր այդ կատարած յայտարարութենէն այժմ մէկ տարի անցած է եւ ոչ իսկ մէկ հեռաձայն մը ստացած է իր մարզիչէն:

ՃԱՏՐԱԿ ԵՒՐՈՊԱՅԻ ԱՂԶԱՆՑ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱՂԹԵՑ ԻՍՐԱՅԷԼԻ ԵՒ ԳՐԱԻԵՑ ՊԱՐԱԳԼՈՒԻՒԻ ԴԻՐՔԸ

Փլովտիւի մէջ (Պուլկարիա) տեղի ունեցող Եւրոպայի ճատրակի աղջկանց խմբային ախոյեանութեան մրցաշարքի Գ. հանգրուանի մրցումներուն, Հայաստանի աղջիկները կարենոր յաղթանակ մը արձանագրեցին, երբ 1,5-0,5 արդիւնքով պարտուեցան մատնեցին Իսրայէլը: Էլինա Դանիլեան յաղթեց միջազգային վարպետ Մաշա Քլինովայի, մինչ Նելլի Աղինեան հաւասարութիւն մը արձանագրեց Իրինա Պոտվինիկի հետ:

Դ. հանգրուանի մրցումներուն, Հայաստանի աղջիկները այս անգամ պարտութեան մատնելով Մոլտովիան 6,5 կէտով գրաւեցին ընդհանուր դասաւորման պարագլուսի դիրքը: Յաջորդաբար երկրորդ եւ երրորդ դիրքերը կը գրաւեն՝ Ռուսիա եւ Պուլկարիա: Մոլտովայի դէմ տեղի ունեցած մրցումին, Էլինա Դանիլեան պարտութեան մատնեց Սվետլանա Փեթրենքոն, իսկ Լիլիթ Մկրտչեան՝ Նայիրա Աղապապեանը:

Ե. հանգրուանին, Հայաստանի աղջիկները պիտի ճատրակի Պուլկարիոյ դէմ:

ՃԱՏՐԱԿ

ՃԱՅՍԱԼ ԽԵՅՐԱԼԼԱ ՏԻՐԱՅԱԻ «ՖԻՏԷԻ ՎԱՐՊԵՏ» ՏԻՏԳՈՍԻՆ

Տուպայի մէջ տեղի ունեցող աշխարհի ախոյեանութեան գտումի մրցումներուն Լիբանանի տղոց ախոյեան եւ բաժակակիր Ֆայսալ Նէյրալլա տիրացաւ «Ֆիտէի վարպետ» տիտղոսին:

Նշեմք, որ «Ֆիտէի վարպետ» տիտղոսը ճատրակի աշխարհի մէջ Յրդ ամէնէն բարձրն է «Մեծ վարպետ» (Grandmaster) եւ «Միջազգային վարպետ» (International Master) տիտղոսներէն ետք:

Այսպիսով լիբանանեան ճատրակը ունեցաւ վարպետի տիտղոսի տիրացող Յրդ մարզիկը իր պատմութեան մէջ:

- Բնարիկ Մուրատեան եւ Ֆէտի Իտ՝ միջազգային վարպետներ:

- Սամիր Սըրոսը, Ահմատ Նաժժար, Ֆայսալ Նէյրալլա եւ Մայս Ժալլուլ՝ «Ֆիտէի» վարպետ:

ՏԵԼ ՓԻԵՌՕ ԿԸ ՅՈՒՍԱՅ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԴԱՇՏԵՐԸ



Լաման Եւ Փիեռո

Ետվենթուսի յառաջապահ Ալեանտրո Տէլ Փիեռո յայտն է, որ յառաջիկայ ամիս՝ Նոյեմբեր 9ին պիտի վերադառնայ ֆուտբոլի կասայ դաշտերը, անցեալ Ալեպտեմբեր 21ին ի վեր, դաշտերէն բացակայելէ ետք: Իտալացի միջազգային յառաջապահը վերադառնաւ Ա. Եւ. Ռոմայի դէմ տեղի ունեցած մրցումին (Քալչիո), որ վերջ գտաւ 2-2 արդիւնքով:

28 տարեկան Տէլ Փիեռո, որ 11 եղանակէ ի վեր մաս կը կազմէ Թորինոյի խումբին՝ Ետվենթուսի, անոր հետ շահած է 13 տիտղոս, նշանակելով՝ 147 կոլ:

Ետվենթուսի 106 տարուան պատմութեան մէջ, ան հինգերորդ յաւազոյն կոլսորդըրը կը հանդիսանայ:

● Լիվելֆօնի գերմանացի միջազգային Տիեթար Համան, իր կարգին յոյսով է, որ յառաջիկայ Նոյեմբերին պիտի վերադառնայ ֆուտբոլի դաշտերը: Ան անցեալ Յուլիոսի ենթարկուեցաւ վիրաբուժութեան եւ մինչեւ յառաջիկայ ամիս հանգիստի պէտք ունի ամբողջութեամբ ապաքինելու համար:

ԼՕՄԻ «ՆԱՅԻՐԻ» ՄԱՍՆԱՃԻՂ ԱՆԹԻԼԵԱՍ

ԸՆԿԵՐԱՅԻՆ Ա. ԸԱՆԴԻՊՈՒՄ

ՊՏՈՒՂՆԵՐՈՎ ԵՒ ԲԱՆՋԱՐԵՂԵՆՆԵՐՈՎ
ԶԱՐԳԱՐԱՆՔՆԵՐ
Կը ներկայացնէ
ՃԵՑ ԶԱՐՄԻԿ ԸԱԼԱՃԵԱՆ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 21 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:00ին, ԱՂԲԱԼԵԱՆՇ. Մ. Ը. Մ. Մարզաձաղկութային համալիրին մէջ:

ԵԱԼՕԹ.- Երբեւեզը ապահովուած է՝ Անթիլիապի «Սիմիթեան» շէնքերու մուտքէն, առաւօտեան ժամը 9:45ին:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԵԱՍ ՄԱՍՆԱՃԻՂ

KUNG FU ՂԱՍԸՆԹԱՅԸ

Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի մասնաճիւղը, հաճոյքը ունի յայտարարելու, թէ սկսած է KUNG FU զարմը ցացնելու, մասնաւորաբար պատանդիներու համար:

Մարզումները տեղի կ'ունենան Շաբաթ օրերը, ժամը 2:00էն սկսեալ, Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ. մարզաձաղկութային համալիրին մէջ:

Մասնակցի փափաքողները կրօնք հեռաձայնել հետեւեալ քիւրուին. 04 - 722903 եւ 03 - 384020, կամ անձամբ ներկայանալ համալիր, Շաբաթ օրերը, կէսօրէ ետք ժամը 1:30էն սկսեալ:

Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԵԱՍ
2003 - 2004
ՄԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՉԱՆԸ

սկսած է հետեւեալ ժամանակացոյցով.

Ճատրակ. Ուրբաթ ժամը 6:00էն 8:00
Kung Fu. Շաբաթ ժամը 2:00էն սկսեալ
Football. Ուրբաթ ժամը 5:30էն 7:00
Կիրակի ժամը 11:30էն 1:00


Basketball դպրոց. տղաք/աղջիկ

1984 - 1985ի ծնունդ
1986 - 1987ի ծնունդ
1988 - 1989ի ծնունդ
1990 - 1991ի ծնունդ
1992 - 1993ի ծնունդ
1994 - 1995ի ծնունդ
1996 - 1997ի ծնունդ

Մանրամասնութեան համար դիմել Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ. մարզաձաղկութային համալիր, Երկուշաբթի եւ Չորեքշաբթի օրերը երեկոյեան ժամը 8:00էն 10:00:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՉԻՆԱՍՏԱՆ ՅԱԶՈՂ ԿԵՐՊՈՎ ԱՆՋՐՊԵՏ ՈՒՂԱՐԿԵՑ ԱՍՏՂԱՆԱՌՐԴ ՄԸ



Չինաստան երկն «Շենժու» տիպի անջրպետանաւով մը աստղանաւորը մը զրկեց անջրպետ՝ պատմական առաքելութեան մը համար, որ երկիրը կը հասցնէ ընտրանի խմբակի մը մակարդակին՝ Ռուսիոյ եւ Մ. Նահանգներու կողքին:

Անջրպետանաւը փոխադրող Տրիտոն արձակուած է հիւսիսային Չինաստանի ներքին Մոնկոլիոյ Կոպի անապատէն՝ 21 ժամուան թռիչքի մը համար, որուն ընթացքին անջրպետանաւը 14 անգամ երկրազուեղին շուրջ ծիրի վրայ պիտի դառնայ:

Ռուս աստղանաւորը Եւրի Կակարինի Ապրիլ 12, 1961ի առաջին թռիչքէն 42 տարի ետք, Չինաստան կը դառնայ երրորդ երկիրը միայն, որ անջրպետ մարդ կը զրկէ:

Չինաստանի նախագահ Հու Ճինթաու ըսած է, որ աստղանաւորը ինքնակալին գնդապետ Եանկ Լիուէյի թռիչքը, 11 տարուան անջրպետագնացութեան ծրագրին գագաթնակէտն է եւ «պատմական քայլ մը» չի փոխադրուողին համար:

Ռուսիա, Եւրոպական Անջրպետագնացութեան Գործակալութիւնը, Հնդկաստան, Ճափոն, Փաքիստան շնորհաւորած եւ զովասանքով արտայայտուած են երէկուան իրագործումին մասին:

(ԱՅՓ)

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԵԹՈՆ ԴԱՐՁԵԱԼ ԹԵՂ ԱԲԻԻ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՓՈՒԹԱՅ

Պաղեստինցիներ դատապարտեցին, մինչ Իսրայէլ ողջունեց ամերիկեան վեթոն Ապահովութեան Խորհուրդին մէջ բանաձեւի մը դէմ, որ կը դատապարտէր Իսրայէլի կառուցած ապահովութեան Պատը Այսրոյրդանանի շուրջ:

Ամերիկեան վեթոն խիստ ոճով քննադատուեցաւ պաղեստինեան իշխանութեան կողմէ: Գլխաւոր բանագնաց Սաէպ Արաբիաթ ըսաւ, որ բանաձեւին ձախողութիւնը կանայ լոյս պիտի նկատուի իսրայէլացիներուն կողմէ, շարունակելու համար կառուցուող Պատին եւ բնակեցման վայրերուն: Ուրաբիաթ շեշտեց թէ աստի կառուցուող արժանի է քննադատութեան ու դատապարտումի, ոչ թէ Միացեալ Նահանգներու կողմէ քաջալերանքի:

Իսրայէլի սակայն գոհ է: Բարձրաստիճան պաշտօնատար մը ըսաւ, որ Ուաշինգթոնի կեցուածքը ցոյց կու տայ որ կողմնակալ չէ եւ կը հաւատայ որ Իսրայէլ իրաւունք ունի ինքնապաշտպանութեան ահաբեկիչներու դէմ: Պաշտօնատարը դիտել տուաւ նաեւ, որ Ֆրանսայի եւ Բրիտանիոյ նման եւրոպական երկիրներու ձեռնպահութիւնն այլ ցուցանիշ է, թէ դրական բարեփոխում մը արձանագրած է անոնց կեցուածքը:

Ամերիկեան վեթոյին զօով յուսախարութիւն յայտնեց Ռուսիա, որուն արտաքին գործոց նախարարութեան բանբերը ըսաւ, որ Մոսկուա ցաւ կը վզայ, որ Ապահովութեան Խորհուրդը չէ կրցած անհրաժեշտ ձեւով հակադարձել Միջին Արեւելքի վտանգաւոր իրադարձութիւններուն:

(ԱՅՓ)

ՉԵՐԲԱԿԱԼ ՈՒԹԻԻ ՆՆԵՐ՝ ՄԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԱԶՈՒԱԴԵՊ ՅՈՅՅԵՐՈՒՆ ԸՆԹԱՑՔԻՆ

Սէնտակաւ Արաբիոյ մէջ տեղի ունեցող մարդկային իրաւանց հարցերու առաջին խորհրդաժողովին կայացման վայրին մօտ Երեքշաբթի օր արձանագրուած բողոք-քիցոյց մը յանգած է 154 ձեռքարկութիւններու, մինչ իշխանութիւնները կը փորձեն հակազիւ պահել թագաւորութեան մէջ թափ ստացող ըմբոստութեանց վրայ:

Պաշտօնատարներ փորձած էին նսեմացնել հազուադէպ ցոյցին կարեւորութիւնը, սակայն ներքին գործոց նախարար Նայէֆ Պըն Ապուիլ Ազիզ իշխանը Երեքշաբթի գիշեր մամլոյ ասուլիսի մը ընթացքին խոստովանած է, թէ Ռիատի կեդրոնը տեղի ունեցած ցոյցերուն ընթացքին 154 հոգի ձեռքարկուած է:

«Օքազ» թերթին համաձայն, ձեռքարկութեան երեքը կիներ եղած են: Երէկ յստակ չէր, թէ ձեռքարկութեանը տակաւին արգելափակուած են:

Երեքշաբթի օր ձեռքարկութեան մէկը յայտնած է, որ ձեռքարկութեանը շատեր քանի մը ժամ ետք ազատ արձակուած են: Սակայն յստակ չէ, թէ անոնք մաս կը կազմեն ներքին գործոց նախարարին տուած թիւերուն թէ ոչ:

Յոյցը տեղի ունեցած էր ընդառաջելով Լոնտոն գտնուող Արաբիոյ մէջ իսլամական Բարեկրթութիւնի Շարժումին կոչին՝ իրրեւ բողոք ընդդիմադիրներու բանտարկութեան դէմ:

Անիկա դիտումնաւոր կերպով գուզադիպած էր Երկուշաբթի օր Ռիատի մէջ բացուած մարդկային իրաւանց հարցերու զօով խորհրդաժողովին կայացման:

Խորհրդաժողովը, որ իր տեսակին մէջ առաջինն էր Մ. Արաբիոյ մէջ, կազմակերպուած էր սէնտակաւ կարմիր Մահիկին կողմէ: Անոր կը մասնակցէին շուրջ 15 երկիրներէ, ներառեալ Մ. Նահանգներէ ներկայացուցիչներ:

Մ. Արաբիոյ միւլթիմի շէյխ Ապուիլազիզ Շէյխ, որ կրօնական գերագոյն իշխանութիւնն է թագաւորութեան մէջ, երէկ հանդարտութեան կոչ ուղղած է:

«Յոյցերը ոչ իսլամներու վերաբերմունք են», ըսած է ան, աւելցնելով, որ մարդիկ իրենց պահանջները «անհրաժեշտ միջոցներով» պէտք է կատարեն:

Ան քաղաքացիներուն կոչ ուղղած է հնազանդիլ իշխանութիւններուն: Իսկ ընդդիմադիր շարժումին բանբերը՝ Սատտ Ֆաթիհ, ըսած է, որ եթէ բողոքի խաղաղ ցոյցը «վայրագօրէն ջնջուած չըլլար, տասնեակ հազարաւոր մարդիկ պիտի մասնակցէին անոր»:

(ԱՅՓ)

ՕԹԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԷՋ ԴՐԱԲ 9000 ԶԻՆՈՒՈՐ ՀԱՇՈՒՈՂ ԱՐԱԳ ՀԱԿԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՈՒԺ ՄԸ

ՕԹԱՆ երէկ ընթացքի մէջ դրաւ 9000 զինուոր հաշուող արագ հակադարձութեան ուժ մը, որ մեծ համեմատութեամբ պիտի ընդարձակէ անոր հաստցութեան ծիրը՝ ահաբեկչութեան դէմ ընդհանրական պայքարին մէջ:

Հոյանտայի ՕԹԱՆի հիւսիսային եւրոպական հրամանատարութեան կեդրոնատեղիին մէջ, ամերիկացի զօրավար Ճէյմս Ճոնզ նոր ուժին զրօշակը յանձնած է անոր առաջին հրամանատարին՝ բրիտանացի զօրավար Ճէյք Տեւըրլի:

Ան ըսած է, որ նոր ուժը զինակցութեան յանձնառութիւնը կը ներկայացնէ՝ ընդհանրական ծիրի մը զինուորապէս օգտակար մնալու:

«Իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով զինակցութիւնը օգտակար, ցամաքային եւ ծովային ու յատուկ գործողութիւններու միացեալ ուժ մը պիտի ունենայ՝ մէկ հրամանատարութեան ներքեւ», յայտնած է ան:

ՕԹԱՆի մէջ Մ. Նահանգներու ղեկավար Նիքոլայ Պըրնզ ըսած է, որ ՕԹԱՆի Հակադարձութեան Ուժը «կարեւոր, զինուորական նոր կարողականութիւն մըն է ՕԹԱՆի համար եւ յաւելեալ փաստ մը՝ ՕԹԱՆի ընթացքի մէջ եղող այլափոխումին՝ դիմագրաւելու համար ընդհանրական ահաբեկչութեան ներկայացուցած նոր սպառնալիքները»:

Ուժը, որ կարողութիւնը ունի 5 օրուան ընթացքին աշխարհի տարածքին որեւէ «տաք վայր» հաստատուելու, ի վերջոյ 21 հազար զինուորներէ պիտի բաղկանայ մինչեւ 2006:

Ուժը 54 տարուան զինակցութիւնը արժատակաւորէն կը հեռացնէ իր արժատներէն՝ իրրեւ Արեւմուտքի պաշտպանը՝ խորհրդային սպառնալիքէն:

(ԱՅՓ)

ԻՐԱԲ ՈՒԺ ՂՐԿԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԵՐԱՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԿՈՉԵՐ

ԱՆԳՐԱՄ, 15 (ԱՅՓ).- Թուրքիա Չորեքշաբթի օր ձնուններու ենթարկուեցաւ՝ վերատեսութեան ենթարկելու համար Իրաք ուժեր զրկելու իր որոշումը, Պաղեստին մէջ անոր դեպքն անհաստատան ակամա հարումն է տը, որ շատերու կարծիքով վաղուց ցուցում մըն էր Անգարայի՝ Իրաքէն հեռու մնալու:

«Կառավարութիւնը շատ ուշադիր կերպով պէտք է գնահատուի կատարէ այս դէպքին եւ երկու անգամ մտած է նախքան իր փնտրութիւններուն կանայ լոյս տալը», ըսած է ընդդիմադիր ժողովուրդին Հանրապետական Կուսակցութեան բարձրաստիճան մէկ անդամը՝ Հալուք Բոյ:

Վարչապետ Ռեճեփ Թայիպ Էրտողան եւ անոր Արդարութեան եւ Բարգաւաճման Կուսակցութիւնը Երեքշաբթի օրունայ յարձակումէն ետք յայտնած են, թէ արաբքը պարպապէս նորագոյնն է հետզհետէ աւելի տագնապայի դարձող Իրաքի մէջ:

Արտաքին գործոց նախարար Ապուիլլա Կիլ Մալեյիլով մէջ տեղի ունեցող իսլամական խորհրդածրոյի կազմակերպութեան համագործակցութեան արդիւնքը շեշտած է, որ «ոչ մէկը կրնայ պղծել թուրքիոյ վճռակամութեան վրայ՝ Իրաքի մէջ կայունութիւն հաստատելու իմաստով»:

Իրաքի ղեկավարներ կը յայտնեն, որ դրացի երկիրներէ փնտրական որեւէ միջամտութիւն կրնայ ներքին քաղաքականութեան միջամտելու ըլլալ եւ խոչընդոտել վերակառուցման արդէն իսկ «դիրաքեկ» ձգտելը:

Իրաքիք ունին նաեւ այն մտաւախութիւնը, թէ իրենց թուրք դրացիները, որոնք Իրաքին իշխած են մինչեւ 1900ական թուականներու սկիզբները, տակաւին քարիղով հարուստ Մուսուլի եւ Բերքուրի մէջ փառասիրութիւններ ունին:



AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE



AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՑԱՍՐԱՇ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ
ԳՐԱՄԵՆԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԵՏԻ ԶԵՆԵ, Բ. ՅԱՐԿ
ԳԵՂ. (02) 242556/7

**NO MATTER WHAT YOU NEED...
... OR WHERE YOU NEED.**



ՆՈՊԵԼԵԱՆ ՄՐՅԱՆԱԿԻ ԳԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ Կ'ԱՆՏԵՍԷ ՏՈՔԹ. ՌԵՅՄԵՆՏ ՏԱՄԱՏԵԱՆԻ ԳԻՒՏԸ

Հակառակ բոլոր ակնյայտ փաստերուն եւ տուեալներուն, Նոպելեան մրցանակի դատական կազմը անտեսեց ամերիկահայ գիտնական տոքթ. Ռեյմընտ Տամատեանի գիտը, որ կը վերաբերի բժշկութեան մէջ լայնօրէն գործածուող մագնիսական թրթռացումներով պատկերահանումի (Magnetic resonance imaging, MRI) արհեստագիտութեան:


Դատական յանձնախումբը բժշկութեան մարզին մէջ Նոպելեան մրցանակը շնորհեց երկու այլ գիտնականներու, որոնք Տամատեանի գիտին հիման վրայ փոփոխութիւններ կատարած էին այդ արհեստագիտութեան մէջ:

Ամերիկեան մամուլը անցնող քանի մը օրերուն լայնօրէն անդրադարձաւ այս հարցին: «Ուաշինկթըն Փոսթ» եւ «Լոս Անճելըս Թայմս» թերթերուն մէջ մէկական էջ ծաւալով ծանուցումներ լոյս տեսան «Ամօթայի սխալ մը, որ պէտք է սրբագրուի» ընդհանուր խորագրով:

Նշեալ ծանուցումին մէջ կը վկայակոչուին այն գիտնականները, որոնք իրենց վրդովումը կը յայտնեն դատական կազմի բացայայտ շրջանցումին դէմ եւ կը տրուին պատմական փաստերը, որոնք կը վերաբերին Տամատեանի գիտին՝ սկսելով 1969էն, երբ ան MRIի մասին իր առաջին առաջարկը ըրած էր, ապա կը նշուի 1970ին MRIի առաջին փորձարկումը, 1977ին՝ MRIի առաջին սարքը, 1980ին՝ սարքը կը սկսի արտադրուիլ եւ 1997ին, գիտներու արձանագրութեան ամերիկեան բարձրագոյն դատարանը կը վերահաստատէ Տամատեանի գիտին 1972ի գրանցումը:

Այժմեւ Նոպելի իր կտակին մէջ յստակօրէն յայտնած է, թէ բնախօսութեան կամ բժշկութեան մարզին մէջ մրցանակ կը շնորհէ «յայտնագործում» կատարած գիտնականներու եւ ոչ թէ յայտնագործութիւն մը բարելուած կամ տուեալ գիտին մէջ նոր թեքնիքներ ստեղծած հետազոտողներու: Դատական կազմին որոշումը, սակայն, բացայայտօրէն խոտոր կը համեմատի Նոպելի կտակին:

**ՄՏԱԻՈՐԱԿԱՆԸ՝
ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ
ԲՈՂՈՔԻ ՄԻՋԵԻ ԶԳՈՒԱԾ
ԿԱՄՈՒՐՁԻՆ ՎՐԱՅ
ԷՋ 5**



معهد بيلوس

للتعليم المهني والتقني

BT

بكالوريا فنية

TS

إمتياز فني

TDS

تكنولوجيا الاختصاص

- منهاج فرنسي. منهاج إنكليزي -

خريجو معهد بيلوس
يشكلون ظاهرة حضارية
وإقتصادية في لبنان والعالم

كن واحداً منهم
للمراجعة والتسجيل

* فرن الشباك - سنتر أبراج 01/292567
* حارة حريك - طريق المطار 01/273813
* الدورة - بناية الضمان 01/894100
* عين زحلنا - الشوف 05/230 400